

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆԱԳՐԻ ՎԱՃԱՐԿԵՐԸ¹
ԵՎ ՌԱՐԱՅԻՆ ՀԵՂԱՎԿԱՐՆԵՐԸ²

ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՅՄԵՐՈՒԿՈՒՄ

Ոիշարդ Գ. Հովհաննիսյան
Լու Անջելես, ԱՄՆ

Հիմնախնդիրը

1980-ականների ներհայաստանյան խնդրումները, Դարաբառյան շարժումը և Հայաստանի Խորհրդային Սիությունից օրինականորեն անջատվելու մտադրության հոչակումը զուգորդվեցին բերկարմքիրային լավատեսությամբ: Այնուհետև, 1991-ին Հայաստանի անկախ Հանրապետության վերահաստառումը նշանակալի փոփոխություններ ազդարարեց և միաժամանակ նոր հեռանկարներ բացեց համաշխարհային հայագիտության զարգացման համար: Սառը պատերազմը կարծես թե ավարտվել էր և ակնկալվում էր, որ հայագիտությանն առնչվող իին կառուցվածքն ու քննադատությունը ևս կենքարկվեն արմատական փոփոխությունների: Մարքսիստական մոտեցումները և Խորհրդային կենտրոնական իշխանությունների կողմից սահմանափակված հայոց պատմության ու մշակույթի արժևորումը կարելի էր լայնորեն վերանայել՝ անկաշկան հետազոտման և արտահայտման նոր մքնուրուտում: Միաժամանակ՝ Արևոտքուն հայագիտությունը կշահեր, եթե ազատվեր Խորհրդային կրթությանը կաղապարելուց և ներգրավվեր Հայաստանի և մյուս գործընկերների ու հաստատությունների հետ գիտական փոխանակության մեջ:

Սրանք էին ակնկալիքները: Հարցն այն է, թե արդյո՞ք այդ ակնկալիքներն իրականացան հայոց վերականգնված անկախության առաջին տասնամյակում: Իհարկե, ինչ որ առումով իրականացան: Հայաստանի Հանրապետությունում կյանքի կոչվող թեռևս փոքրաքանակ իրատարակությունների բովանդակությունն ու մոտեցումները ցույց են տալիս, որ նշանակալի փոփոխություններ են տեղի ունեցել թե ձևի և թե բովանդակության մեջ: Ծավալվեցին նախկինում տարու համարվող կամ մանրազնին վերահսկվող թեմաների համարձակ քննարկումներ, թեև Հայաստանի տնտեսական և քաղաքական վատրարացող պայմանները կարող էին խացնել այդօրինակ հարցերի վերաբերյալ հասարակական հետաքրքրությունն ու խանդավառությունը: Սակայն, Հայաստանի և արտերկի հայագետների փոխհարաբերություններում նկատվեցին նաև անհանգստացնող երևույթներ, որոնցից զիսավոր դոգմատիզմի և անհանդուրժողականության նորացված միտումն էր:

Խորհրդային կարչակարգի վերջին տարիներին Հայաստանում այս երևույթները նկատելիորեն նվազել էին: Նորարարությունը ոչ միայն հանդուրժվում, այլև խրախուսվում էր: Բնական, հասարակական և հումանիտար գիտությունների հրատարակություններում, Հայկական Սովետական հանրագիտարանի էջերում և այլուր տեղ գտան նախկինում արգելված անուններ ու թեմաներ: Իմ բնագավառում, Հայաստանի Առաջին Հանրապետության նշանակությունը վերագնահատվում

էր, դեկապարության անունն ու պատիվը՝ Վերականգնվում: Նույնը կարելի է ասել ողջ Հայկական հարցի և արդի հայոց պատմության վերաբերյալ: Անվանի գիտնականներ, ինչպիսիք էին Սկրտիչ Ներսիսյանը, Զոն Կիրակոսյանը և Ուուրեն Սահակյանը, շրջանցեցին նախկին սահմանափակումները բացելով նոր հորիզոններ, չնայած այն հանգանաքին, որ նրանք շարունակում էին պնդել, թե Հայաստանի փրկությունն ու ապագան անքակտելիորեն կապված են Ուուրաստանի և Խորհրդային Սիության հետ: Իսկ գիտական և հայագիտական ուսումնասիրությունների կարկառուն դեմքեր Վիկտոր Շամբարձումյանը, Գագիկ Սարգսյանն ու Բարեկեն Առաքելյանը (նշում է Յուրի Ղամբարյանին, Զակոր Մանանյանին և Թորոս Թորամանյանին հաջորդող սերնդի ընդամենը երեք լավագույն ներկայացուցչիների անունները) հավատարիմ էին մնում գիտության միջազգային բարձրագույն չափանիշներին: Արտերկրության դասավանդող և հետազոտող գիտնականներս խորապես երախտապարտ ենք Հայաստանի մեր այն գործընկերներին, ովքեր մեզ տրամադրեցին հարյուրավոր արժեքավոր հրատարակություններ, որոնցից այն ժամանակ մենք կարող էինք օգտվել, քանի որ շատ քիչ նյութեր էին լույս տեսնում արևանտյան լեզուներով: Ես անձամբ մեծապես օգտվել եմ նրանց հավաքական ժողովածուներից և հայ ժողովրդի պատմության որոշակի ժամանակաշրջաններին վերաբերող աշխատություններից: Ես նաև տպագրված էի այն հմտությամբ, որով մեր գործընկերները իրենց անձնական և ազգային տեսակետներն էին ներկայացնում առանց բացահայտորեն ոտնահարելու մարքսիստական պատմագրության կանոնները:

Խորհրդային իշխանության վերջին տարիներին Հայաստանում լարվածության աճի և երկրի անվտանգությանը լուրջ սպառնալիքի առկայության պայմաններուն առաջացած նաև հակառակ միտումը: Որոշ հեղինակներ ավելի անհողողող դարձան և գիտությունը սկսեցին գնահատել ընթացող իրադարձությունների վագաշտական տեսանկյունից: Թվում էր, թե դարաբառյան գնահամարը սեղմեց ժամանակն ու այդպիսով՝ ուղղակի կապ առաջացրեց 1915թ. Հայոց ցեղասպանության հետ: Որոշ հեղինակներ այն տեսակետն էին պնդում, որ անհրաժեշտ է առաջնահերթությունը տալ հայ ժողովրդի իրավունքներին՝ ցուցանելով հայկական գրեթե ամեն ինչի բնիկ եռթյունը: Որկից ակնարկ առ այն, թե հայ ժողովուրդը կարող է կազմավորված լինել բազմաթիվ տեղաշարժերի և նախկինում գոյություն ունեցած ցեղերի հետ խանճնելու երկարատև գործընթացքում, համարվում էր հայերի իրավունքների հանդեպ ուսնձգություն և սպառնալիք Հայ դատին: Ուրարտուն կարող է ծագած լինել ոչ այլ ինչ, եթե ոչ՝ հայկական թագավորություն, իսկ բնիկ հայերը պետք է կամ ծագած լինել ինչերի քրիստոնեական շրջանից դեռ շատ հազարամյակներ առաջ: Ցանկացած ոք, ով կամ կամ քննարկում էր այս տեսակետները, դիտվում էր որ որությանը և Աղքական թագավորությունը, իսկ բնիկ հայերը պետք է կամ ծագած լինել ու այլ ինչ, եթե ոչ՝ հայկական թագավորություն, իսկ բնիկ հայերը պետք է կամ ծագած լինել ինչերի քրիստոնեական շրջանից դեռ շատ հազարամյակներ մի փոքր շրջանակ, որը գիտությունը վեր էր ածում հավատարնության և ընդունելիության. քաղաքական լակոնիստ այս մոտեցումը, այնուամենայնիվ, մեծ ստվեր գտեց ժամանակակից գիտության և Հայաստանի ու արտերկի գիտնականների որոշ փոխհարաբերությունների վրա:

Միաժամանակ՝ Արևոտքուն շատ հայագետներ լիովին չեն գնահատում հայերի գացմունքների խորությունն ու այն ազդեցությունը, որ կարող էին ունենալ նրանց ազգի պատմական փորձը, կանքի դժվարությունները, հայկական պետության գոյության դեմ սպառնալիքները: Դրանք ուղղակիորեն ներգործում են մշտապես լար-

Ված պայմաններում աշխատող Հայաստանի գործընկերների տրամադրության ու աշխարհայացքի վրա: Խնդիրն այն է, որ քննադատության կամ նրբանկատության պակասի պարագայուն աղբյուրն ու պատճառը չպետք է աճբողջությանը դրվեն մեկ կամ մյուս կողմի վրա: Ավելին, մարտահրավերն այստեղ պետք է լինի փոխառնան և հարգանքի ամրապնդման ուղիների որոնումը:

Այս հանգամանքի շնորհիկ համաշխարհային սույն համագույնարը հատուկ Աշա-նակություն է ստանում: Դուսով ենք, որ քննարկումների վերջում մենք կգնահա-տենք հայագիտության բնագավառի կարևոր առաջնաբացները ինչպես նախկին Խորհրդային Միության սահմաններում, այնպես էլ դրանցից դուրս՝ Եվրոպայում, Ամերիկայում և Միջին Արևելքում, ողջանտորեն և առանց նախապաշարումների կգնահատենք տարբեր մոտեցումներն ու դիրքորոշումները, կզբաղվենք լուրջ և կառուցողական փոխանակումներով, կինտրենք ու կգտնենք միջոցներ՝ գիտության տարբեր ճյուղերից յուրաքանչյուրով և դրանց բոլորի միջև կապերի ամրապնդ-ման հանար՝ անկախ այն բանից, թե որտե՞ղ են ծնվել, որտեղ են ապրում կամ աշխա-տում անհատ գիտականները: Չայաստանի Գիտությունների Ազգային ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի նախաձեռնած այս գիտաժողովը՝ հուսանք շի-նչի ակնկալիքների անհրաժեշտ նախաքայլն է: Սա մեզ հնարավորություն կրնաների տեղեկանալու ողջ աշխարհում հայագիտության բնագավառի վերջին նվաճումների մասին, նիևնույն ժամանակ միջոցներ կստեղծի այս համաժողովը որպես հիմնաքար-օգտագործելու՝ նոր և ավելի բարձր մակարդակի փոխգործակցության հասնելու նպա-տակով:

Հայագիտությունը Եվրոպայում

Կարծում եմ օգտակար կիխներ ընդհանուր պատկերացում տալ արտերկրի հայագիտության վերաբերյալ և այդ բնագավառի գորացմանն ուղղված մի քանի առաջարկ անել: Բոլորս քաջատեղյակ ենք, որ արդի ժամանակաշրջանի հայագիտությունը Եվրոպայում իր ուրույն ուղին սկսեց լուսավորության և ետլուսավորության շրջաններում: Ամստերդամի հայ վաճառականներն ու խոշոր գիտնականները և Խոսլիայի կարողիկ միսիոներները ներմուծեցին հայատառ տպագրությունը՝ առաջին հրատարակելով կրոնական և դասական տեքստեր, քերականական ձեռնարկներ: Արևելքով հրապարակելը, ինչպես նաև դասական արմատների որոնումը Եվրոպացի ճանապարհորդներին ու արկածախնդիրներին, բանաստեղծներին, պատմաբաններին ու լեզվաբաններին մղեց դեպի Արևելք անտիկ քաղաքակրթություններ: Տասնութերորդ դարում Վենետիկում, իսկ որոշ ժամանակ անց նաև Վիեննայում Միհիթարյան միաբանությունը ստեղծեց հայ գիտության նոր չափորոշչեր: Ավելի քան երկու հարյուրամյակ նրանք այդ բնագավառի առաջատարներն էին: Միհիթարյաններն էին, որ վերահայտնագրութեցին հայկական կլասիցիզմը, ինչպես նաև զբաղվեցին հայոց լեզվի, պատմության, աշխարհագրության և պատմական աղբյուրների գիտական ուսումնասիրությամբ: Ինքնաբացահայտման և ապստամբության քամինները փշելով Եվրոպայի վրայով՝ ստեղծեցին գրական և քաղաքական ոռմանտիզմի ոճը, որի հոսանքները տարածվեցին դեպի Արևելք Օսմանյան և Ռուսական կայսրություններ: Եվ հակառակ ուղղությամբ, Արևմուտքի ազդեցության տակ գտնվող հայ միտքը Դնդկաստանից սկսելով՝ շշափեց հայ ազտագրական պայքարի գաղափարներն ու հասկացությունները: Մինչև տասնիններորդ դարի երկրորդ կեսը հայկական ոռմանտիզմը վերաճեց ոռմանտիկական ռեալիզմի, իսկ հայ մտավորականներն ընդլայնեցին ազգային գաղափարը՝ անկայխ քաղաքական առկա սահմաններից:

Տանիններորդ դարի վերջին և քսաներորդ դարի սկզբին Եվրոպայի հայագետներն էին, որ դարձան առաջավոր հայասերներ, ովքեր ջանք չին խնայում, որպեսզի Եվրոպական հասարակության և կառավարությունների գիտակցությանը հասցնեն հայ ժողովորի վիճակն ու ուժահարված իրավունքները: Նրանք վճռեցին ձայն չունեցողների ձայնը դաշնալ, և սա շարունակվեց ցեղասպանության ողջ ընթացքում ու դրանից հետո: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմից հետո թուրքական ազգայնական շարժման հաջողությունը, Հայկական հարցը մոռացության մատնելը հենց այն իշխանավորների կողմից, որոնք պարտավորվել էին ստանձնել հայ ժողովորի իրավունքների վերականգնման և բարեփոխումների հարցը, ինչպես նաև Հայաստանի Առաջին Հանրապետության փլուզումը և փրկված այն փոքր հողաշերտի խորհրդայնացումը, աստիճանաբար խացրին հայասերների ձայնը և հանգեցրին Եվրոպայում հայագիտության նկատմամբ հետաքրքրության և նվիրվածության անկանոնը:

Մինչև քամերորդ դարի կեսը հայագիտության ասպարեզում այլևս չեն լսվում հայտնի Եվրոպացիների անուններ: Դայագիտությունը, մի քանի բացառություններով, ինչպիսիք էին Սիկողայոս Աղոնցը և Արտաշես Արենյանը, նահանջեց Վենետիկի Սուրբ Ղազար և Վիեննայի Միտրարյան վանքերի պատերի ետևու: Այնտեղ ևս հայ գիտության մակարդակը անկում ապրեց, իսկ հայագիտությունը սահմանափակվեց անհատ գիտնականների ուսումնասիրություններով, որոնք ցրված էին և հազվաբեց էին մինչանց հետ շփվում: Որպես այս իրավիճակի արտացոլում 1933-թ. դադարեց Ֆրեդերիկ Մակլերի խմբագրությամբ լույս ընծայվող “Révue des études arménienes” հայագիտական պարբերականի հրատարակությունը: Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին ի հայտ եկան մի քանի գիտնականներ, ինչպես օրինակ՝ Ֆրեդերիկ Ֆեյդին Փարիզում և Ռոբերտ Գորելը ժնկում, սակայն Արևմուտքում հայագիտության առարկա կամ դպրոց, որպես այդպիսին, այլևս չէր մնացել: Առայսօր անձնական նախաձեռնության վրա հիմնված կառույցը ընդհանուր առմանք շարունակում է գործել Եվրոպայում, չնայած ավելի նեծ թվով անհատներ են ներգրավված այդ բնագավառում:

Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հիմնադրումից առաջ և հետո ստեղծված ամբիոնների կամ ինստիտուտների գաղափարը Արևոտքում բավականին ուշ մարմնավորվեց: Լիգոնի (իմա՝ Լիսաբոն) Գալուստ Կյուլպենկյան Հաստատությունը 1965-ին Օքսֆորդի համալսարանում հիմնեց Կյուլպենկյանի անվան հայագիտության ամբիոն՝ ամբիոնի վարիչը ընտրելով Չարլզ Դուուսեթին: Սակայն Եվրոպական այլ երկրներում այնքան էլ արագ չտարածվեց այս նախադեպը: 1992-ին Դուուսեթին հաջորդեց Ուրեմտ Թոմասոնը, իսկ 2002-ից ի վեր ամբիոնը ունկավարում է թերու վան Լինթը, իսկ հետազոտությունների դասախոսը թիմոթի Գրինվուդն է. նրանց բոլորի առաջնային, թենատիկ կիզակետը հայկական դասական և միջնադարյան գրականությունն ու աղբյուրներն են: Լոնդոնի արևելյան և աֆրիկյան լեզուների դպրոցում Չարլզ Դուուսեթը հայերեն էր դասավանդում նախքան 1965թ. Օքսֆորդ մեկնելը, իսկ Դյեվիդ Մարչալ Լենգը որոշ ուշադրության արժանացրեց Վրացագիտությունն ու հայագիտությունը՝ դրանք հանրամատչելի դարձնելով ոյուրընթեռնելի ուսումնասիրությունների և գունավոր լուսանկարների միջոցով: Էղմունդ Շերցիգը Սանչեստրի համալսարանում կարևոր ուսումնասիրություններ է ծեռնարկել հատկապես հայկական առևտորի պատմության վերաբերյալ:

Եվրոպական մայրցամաքում Ֆրանսիան, որտեղ հայերենը դասավանդվում է Նապոլեոն Բոնապարտի ժամանակից ի վեր, առաջատար տեղ է գրավում՝

հայագիտությամբ զբաղվող գիտնականների թվով: Բարեբախտաբար, Յայկ Բերերյանի եռանդի շնորհիվ և Գալուստ Կյուլպենկյան հիմնադրամի աջակցությամբ “Révue des études arméniennes” պարբերականը 1964-ին վերսկսեց իր գործունեությունը՝ որպես հայագիտական հրատարակությունների նոր շարք: Ֆրեդերիկ Ֆեյդի սանը՝ ժամանակակից մյուս գիտնականները զբաղվում են բյուզանդագիտական, ռուս-արևելյան գիտական հետազոտությունների, կրոնի ու աստվածաբանության, լեզվաբանության և արևելյան լեզուների ուսումնասիրությունների, մարդաբանության, քաղաքագիտության, միգրացիայի և սփյուռքագիտության, ցեղասպանության ծրագրերով: Նրանց մեջ մասն աշխատում է Փարիզի համալսարաններում ու ինստիտուտներում Սորբոնում, Կարոլիկ ինստիտուտում, Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնում (CNRS), “École Pratique des Hautes Études”-ում, Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային համալսարաններում (INALCO) (Անահիտ Տեր-Մինասյան, Կիեր Սեդա Սուլրադյան, Անահիտ Տոնապետյան, Ազնես Ուզունյան, Մարտին Շովհաննեսյան, Ռայմոնդ Գևորգյան, Գրիգոր Բլոյյան, Ժան-Միշել և Նիկոլ Թիերիներ, Ծովինար Գևոնյան, Գեղամ Գևոնյան, Չորջ Ղեպեյրոտ, Պատրիսիա Բոյսոն և ուրիշներ): Գիտնականներ կան նաև Լիոնում (Գրիգոր Բլոյյան), Սենտ-Էտիենում (Ժալին Տեր-Մինասյան), Եկվան-Փրովանսում (Ուրերտ Տեր-Մերգերյան), Լիմոնում (Ֆրանսուազ Վրդիշե-Կարաս) և Սոնակենում (Ժերար Ղեղեյան): “Révue des études arméniennes” պարբերականի կողմին երկու նորաստեղծ պարբերականներ իրենց էջերը բացեցին այն հեղինակների առջև, ովքեր հիմնականում, զբաղվում են ժամանակակից հայոց պատմությամբ և մշակույթով: Դրանք են “Révue du monde arménien moderne et contemporain” (տպագրվում է 1994-ից “Société des Études Arméniennes”-ի կողմից, INALCO-ի մասնակցությամբ) և “Révue d’histoire arménienne contemporaine”-ը, որի խմբագիրը 1995-ից Ռեյմոնդ Գևորգյանն է: Փարիզի Նուլքարյան գրադարանը և Ֆրանսիայի Ազգային գրադարանը (Bibliothèque nationale) այդ բնագավառի գիտնականների համար կարևոր շտենարան և աղյուր են:

Եվրոպական այլ երկրներում և անհատ գիտնականներ զբաղվում են դասական և ժամանակակից լեզուների ու գրականությունների, աստվածաբանության և հայրաբանության (patristics), բյուզանդական և արևելյան քրիստոնեության որոշ բնագավառների ուսումնասիրությամբ, ինչպես նաև ժամանակակից պատմության ու ցեղասպանության հիմնահարցերով. Հվեյցարիայում Ֆրիբուրգում (Ֆրանց Մալի), Ցյուրիխում (Ցանս-Լուկաս Քիզեր) և Ժնևում (Վալենտինա Կալցուլարի-Բուվիե, Բերնար Ռուտիե), Բենգալիայում Լուվենում (Բերնարդ Կուլիե, Անդրեա Շմիդ) և Բրյուսելում (Ֆրանսին Մավեն), Նիդեռլանդներում Լեյդենում (Յուս Վեյտենբերգ), Դանիայում Ասթրիլսում (Դեննինգ Լեհման), Գերմանիայում Քալբե-Վիթենբերգում (Դերման Գոլց, Արմենուի Դրոստ-Արգարյան, Խաչիկ Ղազարյան), Տյուրինգենում (Գարիելե Վինելեր), Բոնում (Գոհար Գասպարյան), Դայդելբերգում (Քրիստոֆ Բուրխարդ), Բեռլինում (Կոլֆանց Յոկ, Ժիրայր Քուչարյան, Թեսա Ջոֆնան), Բոխումում (Սիհիրան Ղաբայ), Ալեխենում (Արմեն Դախնագարյան), Ավստրիայում Վիեննայում (Վերներ Զայֆ, Մեսրոպ Գրիգորյան, Արտեմ Օհանջանյան, Դեմյուտ Բուշհաուգեն) և Զալցբուրգում (Յասմին Դում-Տրագուտ), իտալական Միլանում Զիլանկարլո Բոլլոնիեցին, (համգուցյալ Արտեմոն Ալպագոն Նովելլո, Պաոլա Պոնտանի), Բոլոնյայում (Գարիելա Ուլուիոցան, Աննա Միլինյան, Սառա Մանսին Լոմբարդի, Լ.Դ. Նոչեստի), Պիզայում (Ալեսանդրո Օրենգո), Վենետիկում (Լևոն Զեքիյան, Սոնա Դարու-

թյունյան), Հռոմում (Մարկո Բայս և Արևելագիտության հայրապետական ինստիտուտում Եկեղեցական ծեսերի հետազոտման զբաղվողների), Լեչում (Ձկուսու Տրախնա, Բերնադետ Տիգե, Ալեսի դե Սիենա), Նապոլիում (հմանեապոլ)՝ (Ալդո Ֆերրարի), Չեխիայում՝ “Պրահայում (Վաղարշակ Սաղինյան), Լեհաստանում՝ Կրակովում (Անդրեյ Պիսովիչ, Ռայֆ-Փեթը Ռիթեր): Սխիթարյան միաբանության հայրերը շարունակում են հրատարակել «Բազմավկե» և «Դանդէս ամսօրեայ» ամսագրերը՝ անկանոն պարբերականությամբ: Եվրոպական մայոցանաքից դուրս ծրագրեր կան Երուսաղեմի Յրեական համալսարանում (Մայք Սթոուն և Նիրա Սթոուն, Սերժի Լա Պորտա), Բեյրութի Յայկացյան համալսարանում (Արա Սանցյան) և նոր Զուլայյում ու Թեհրանում Իրանում (ուր պետության աջակցությամբ ստեղծվեց Յայագիտության իրանական հմատիտուտ, որը ղեկավարում է Արման Բուղայյանցը): Իրենց հերթին՝ Կիլիկիոն կաթողիկոսությունը և Երուսաղեմի պատրիարքությունը շարունակում են հովանավորել և հրատարակել կարևոր հայագիտական աշխատություններ:

Ողջ Եվրոպայում ավելի շատ անհատական նախաձեռնության, քան պետական կամ ինստիտուցիոնալ աջակցության շնորհիվ է, որ հայագիտությունը նոր շունչ է ստացել, չնայած ֆրանսահայ համայնքի կազմակերպումը՝ որպես հասարակական և քաղաքական ուժ, անկասկած, այս ոլորտի նկատմամբ հետաքրքրություն ավելի է մեծացրել: Չնայած հայագիտությունը կարող է Եվրոպական համալսարանների և հետազոտական կենտրոնների ծրագրերի միայն երկրորդական բաղկացուցիչը լինել, այս գործոնը ներուժ ունի առավելության վերածվելու՝ միջառարկայական հետազոտության և փոխազդեցության տեսանկյունից: Իրատես լինելու դեպքում կարելի է գերծ պահել մեկուսացումից և լուսանցքային դառնալուց, ինչը անցյալում հաճախ է պատահել: Նման մոտեցումը կարելի է արժենութել Սիրարփի Տեր-Ներսիայանի օրինակով, որը նպաստել է հայ և բյուզանդական արվեստի պատմության ու մշակույթի սերտաճանանը, ինչը Պիտեր Խարանիսին և Ալեքսանդր Կաժանին է հաջողվել բյուզանդական տեսանկյունից՝ Բյուզանդիայի կայսրության հազարամյա պատմության մեջ հայերի դերը հետազոտելիս:

Անգամ այս դրական գործոնի առկայությամբ՝ Եվրոպայում Յայաստանի ու հայերի մասին ընդիհանուր իրազեկվածությունը ննում է անբավարար: Մինչ օրս Յայաստան առհասարակ բացակայում է Եվրոպական դասագրեթից, ինչպես նաև անտիկ քաղաքակրթության ու ժամանակակից համաշխարհային պատմության ուսումնասիրություններից: Խնդիրն այն է, որ հարկավոր է ուղիներ գտնել՝ Յայաստանի ու հայ ժողովրդի դերն ու նշանակությունը համաշխարհային հանրության մտապաշտում, ինչպես նաև մարդկության ընդհանուր պատմության գրառականությունը ներգրավելու համար: Ինարկե, խրախուսելի է այն փաստը, որ Վերջին մի քանի տասնամյակում Արևմտացիում գրանցվել է զգալի առաջընթաց՝ գեղարվեստի և արվեստի պատմության, ծեռագրերի գրացուցակների, գրականության մատենագրության, Յայկական հարցի, Յայոց ցեղասպանության վերաբերյալ աշխատությունների, ընկերաբանության, մարդաբանության, փիլիսոփայության և աստվածաբանության ասպարեզում հայագիտության վերաբերյալ հարյուրավոր հատորների հրատարակման առումով:

Եվրոպայի հայագետները, հետևելով Ամերիկայի գործընկերների օրինակին, 1982-ին դրական քայլ կատարեցին՝ ստեղծելով Յայագիտության միջազգային ընկերակցությունը (AIEA): Ընկերակցությունը պարբերական տեղեկագրի միջոցով իր անդամներին տեղեկացնում է ընթացիկ հետազոտությունների մասին, իսկ 1985-

ին նախածեռնեց մի շարք կարևոր սեմինարներ: Առանձին թեմաների կամ ժամանակաշրջանների գնահատման տեսանկյունից այս փոքր սիմպոզիումները գործնական տրամաբանություն ունեն և կարող են դառնալ հայագետների միջև փորձի փոխանակման միջոցներից մեկը՝ անկախ նրանց բնակության վայրից: Այս սեմինարների թեմաներից են եղել հայերեն «Աստվածաշունչը», հայոց լեզվի տեղը հնդեվրոպական լեզուների շարքում, արդիականացման հիմնահարցերը, տեքստերի խմբագրությունները, Հունարան դպրոցը, միջին հայերենը և հայ գրականությունը, թարգմանական արվեստը և ապոկրիֆային գրականությունը: 2001-ին վերսկսած նոր շարքը ներառում է գրականության, լեզվաբանության, արվեստի, պատմության, գաղափարական պատմության և բանասիրության վերաբերյալ սեմինարներ: Նրանսիայում "Société des Études Arméniennes"-ը հրատարակում է տեղեկագիր և տարեգիր, կազմակերպում է ամենամյա սեմինարներ՝ որոշակի թեմաներով և նյութերով: Դայագիտական այսպիսի պարբերական համագումարներից զատ՝ խիստ օգտակար կլինի, հետևելով Եվրոպական օրինակին, ավելի հաճախ կազմակերպել քննարկումներ և սեմինարներ Դայագիտանի, Եվրոպայի, Միջին Արևելքի, Ամերիկայի գիտնականների մասնակցությամբ: Այդ հանդիպումների ընթացքում տեղի կունենա ինչպես շահեկան փոխհարաբերություն, այնպես էլ թեմաների, հիմնախնդիրների, առաջնահերթությունների, առաջնահերթությունների, առաջնահերթությունների, առաջնահերթությունների:

Դայագիտությունը Ամերիկայում

Ամերիկայում հայագիտության բնագավառի զարգացումն ընթացել է փոքր-ինչ այլ կերպ, քան Եվրոպայում: Գիտական աստիճան շնորհող գրեթե բոլոր ծրագրերը հիմնված են հայ համայնքի կամ անհատների ջանքերով նվիրաբերված ամբիոնների վրա: Ամերիկյան ծրագրերն օժտված են ավելի ժամանակակից հզոր բաղադրիչով: Մինչև 1950-ականները հայկական ուսումնասիրությունների չնչին առկայությունը դուրս էր մնում ուսումնական կանոնավոր ծրագրերից, և սովորաբար լեզվի ընդամենը մեկ դասընթացի հնարավորություն էր ընձեռվում, որը կամավոր ուսուցիչը անց էր կացնում երեկոյան, ինչպես օրինակ՝ Արմեն Զերեջյանը՝ նյու Յորքի Կոլումբիա համալսարանում: 1960-ականներին Լոս Անջելեսի Դայ կրթական հիմնարկությունը Կալիֆորնիայի համալսարանի Բերկլիի մասնաճյուղում Պոլ Էսաբալի համար ժամանակավոր հայերենի դասընթացը ֆինանսավորեց, և չնայած հասկացնում էին, թե միջոցները հնարավորություն կտան մշտական հաստիք ունենալ, ծրագիրն, այնուամենայնիվ, ֆինանսավորումն ավարտվելուն պես փակվեց:

Ուսումնական բնականոն ծրագրում հայոց լեզուն ներմուծվեց Մերձավոր Արևելքի կենտրոնում, Դարպարդի համալսարանում (Քեմբրիջ, Սասաքուսեթ)՝ Ավետիսի Սանդյանին 1957-ին հետազոտող, իսկ 1959-ին՝ դասախոս նշանակելով: Առաջին նվիրաբերված մշտական ամբիոնը, որն այժմ կոչվում է Մաշտոցի անունով, ֆինանսավորվել է 1965-ին և պաշտոնապես հիմնադրվել Դարպարդում 1969-ին՝ Դայագիտության և հետազոտությունների ազգային ընկերակցության (NAASR) նախաձեռնությամբ, որտեղ Ուրեմտ Թոմսոնը գրադեցնում էր ամբիոնի առաջին վարիչը պաշտոնը: Նրան 1992-ից հաջորդեց Զեյմս Ռասելը: Գևորգ Բարդակյանը Միջազգային համալսարան տեղափոխվելուց առաջ, 1974-1984թթ. ընկած ժամանակաշրջանում համատեղել է դասախոսի և գրադարանի աշխատակցի պարտականությունները: Նաև հայկական մենագրությունների շարք է հրատարակվում Դարպարդի համալսարանի հրատարակչության աջակցությամբ: Դայ լեզվաբանության

մասնագետ Բերտ Վոքսը մինչև 2003թ. դասավանդում էր Դարպարդում, երբ համաձայնեց պաշտոնավարել Վիսկոնսին համալսարանի Միլվուկիի մասնայուղը:

Դարպարդի օրինակին հաջորդեցին նվիրաբերված ամբիոնները Լոս Անջելեսում Կալիֆորնիայի համալսարանում, որտեղ 1960-1962թթ. հրավիրված դասախոսները Գևորգ Սարաֆյանը, Ա. Օ. Սարգսյանը և Լուիզ Նալբանդյանն առաջինն ստանձնեցին հայոց լեզվի դասընթացների անցկացումը: Ուշարդ Շովհաննիսյանը, որ 1960-ից ի վեր Ֆրեզոնյում Կալիֆորնիայի համալսարանի երեկոյան դասընթացներում հայոց պատմություն և նշակույթ էր դասավանդում, 1962-ին հրավիրվեց Լոս Անջելեսում Կալիֆորնիայի համալսարան, որտեղ և դասավանդում է մինչ օրս: Ավետիսի Սանդյանը 1965-ին այստեղ նշանակվեց հայոց լեզվի և գրականության դասախոսության ամբիոնի առաջին վարիչ: 1992-ին Սանդյանի թոշակի անցնելուց հետո Սարգ Նշանյանը, Պիտեր Կառլին և այլ դասախոսներ էին լեզու և գրականություն դասավանդում մինչև Կառլին 2000-ին նշանակվեց ամբիոնի վարիչ: 1985-ին Լոս Անջելեսում Կալիֆորնիայի համալսարանի հայոց պատմության կարգավիճակը վերածվեց Դայ կրթական հիմնարկության արդի հայոց պատմության ամբիոնի, իսկ հաջորդ տարի Ուշարդ Շովհաննիսյանը նշանակվեց ամբիոնի առաջին վարիչ: Տարիների ընթացքում եղել են բազմաթիվ ժամանակավոր դասախոսներ և օգնականներ, որոնց թվում էին Ժոզեֆ Բեշիշյանը, Լևոն Սարաշյանը, Կարապետ Մոնջյանը, Գրիգոր Արեցյանը, Աշոտ Գալյոյանը, Ջուրի Բերեբյանը, Սիմոն Փայասյանը, Ստեփան Աստուրյանը, Անահիտ Բեշիշյանը, Գայանե Շակորյանը, Ռոբերտ Ջյուսենը, Ռուբինա Փիրումյանը, Շամիկ Թաշճյանը, Արքահամ Բողիկյանը և Ռիտա Որբերյանը: Լոս Անջելեսում Կալիֆորնիայի համալսարանի գրադարանի մեծարժեք հայկական հավաքածուն համարվում և այժմ էլ դասակարգվում է Գիա (Ծիածան) Ավագյանի կողմից:

Կոլումբիայի համալսարանում Նինա Գարսոյանը հայոց և բյուզանդական պատմություն էր դասավանդում մի քանի տարի՝ նախքան 1979-ին Գևորգ Ավետիսյանի անվան հայոց պատմության և քաղաքակրթության ամբիոնի առաջին վարիչ նշանակվելը: 1990-ականների սկզբն, նրա թոշակի անցնելուց հետո, Սարգ Նշանյանը և այլոք այս ամբիոնում դասավանդում են որպես հրավիրյալ դասախոսներ: Բացի դրանից, Նիկիտ և Էլենորա Օրջանյանները բավականաչափ միջոցներ են հատկացրել հրավիրված դասախոսներին ֆինանսավորելու համար: Կոլումբիայի համալսարանում դասավանդում գտնվում է Գրիգոր Մաքսուլյանը, Պիտեր Կառլին, Զեյմս Ռասելը, Զորջ Բուռնությանը, Խաչիկ Թոլոյանը, Ռոբերտ Ջյուսենը, Լևոն Արքահամյանը, Արա Սարաֆյանը, Ռոբերտ Իրվինը և Սենա Շահոյանը:

Միջիգան-Էնն Արքոր համալսարանում երկու ամբիոն է հաստատվել: Ալեք Մանուկյանի անվան հայոց պատմության ամբիոնը հիմնադրվել է 1980-ին, որի վարիչը 1981-1995թթ. Ռոնալդ Սյունին էր, 1997-2000թթ.՝ Ստեփանի Պլազը, իսկ այժմ այն վերափոխվել է հրավիրված պրոֆեսորական կազմի, որը վարում է Ժիրայր Լիպարիտյանը: Մարի Սանուկյանի անվան հայոց լեզվի և գրականության ամբիոնը 1987-ին նվիրաբերվելուց ի վեր գլխավորել է Գևորգ Բարդակյանը: Միջիգանի համալսարանի Դիրեկտորն մասնաճյուղում Դայկական հետազոտական կենտրոնը, որը վարում է Դենիս Փափազյանը, իհմնադրվել է 1985-ին: Այս կենտրոնը որոշակի ծրագրերի համար դրամաշնորհներ է ստանում մի շարք անհատների և կազմակերպությունների, այդ թվում «Կարդանանց ասպետներ» կազմակերպության կողմից:

Հայագիտությունը դասավանդվում է Ֆրեզնոյում Կալիֆորնիայի ճահանգային համալսարանում 1960-ականներից ի վեր՝ սկիզբ առնելով Լուիզ Նալբանդյանի վարած դասընթացներից: 1988-ին հիմնադրվեց Հայկ և Իզարել Բերբերյանների անվան ամբիոնը, իսկ Տիգրան Կոյունջյանը, որն արդեն վարում էր Ֆրեզնոյի հայկական ծրագիրը, նշանակվեց ամբիոնի վարիչ, Բարլո Տեր-Սկրտյանն էլ նրա օգնական: 1990-ականներին Իզարել Գաբրիելյանը նշանակվեց Երկրորդ նվիրաբերված Կազմանի անվան հայոց պատմության պրոֆեսորական պաշտոնում, սակայն Վարչական ներքին որոշ դժվարություններից ելնելով՝ այն փոխարինվեց հրավիրյալ պրոֆեսորական կազմի: 2000-2003թ. Կազմանի պրոֆեսորներ եղել են Ռիչարդ Շովիհաննիսյանը, Ռոբերտ Չուլսենը, Բարբարա Սերգեյյանը և Արա Սանջյանը:

Երկու նվիրաբերված ամքին է հիմնադրվել Մասաշուսեթս նահանգի Սենֆորդ քաղաքի թթվատու (Tufts) համալսարանում: Արթուր Դայյանի և Արա Օգտեմելի անվան հայկական արվեստի և ճարտարապետության պատմության ամքինը հիմնադրվել է 1989-ին, որի վարիչն է Լուսի Տեր-Սանվելյանը: Դարակցյանի և Զաֆարյանի անվան հայոց պատմության ամքինը ստեղծվել է 1998-ին, որի առաջին վարիչն է Ինա Բաղդյանց-Սկրեյբը: Մինչ այդ հայոց պատմության դասընթացներն անցկացնում էր հրավիրյալ դասախոսական կազմը, որի անդամներից էին Րաֆֆի Կ. Դովիհանիսյանը, Զորօ Շուլցությանը և Բարբարա Մերգերյանը: Ոչ հեռու, Ուսթերի թլարկ համալսարանում 2002-ին նվիրաբերվեց Գալուստյան-Մուզարի անվան արդի հայոց պատմության և Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ամքինը, իսկ Մինոն Փայասյանը նշանակվեց ամքինի առաջին վարիչ:

Ի հավելումն սույն ծրագրերի՝ Սինեստտայի հաճախարանում կիմնվեց Արշան և Շարլոտ Օհաննեայանների անվան ամբիոնը, պայմանով, որ Դայոց ցեղասպանությունը պետք է ուսումնական ծրագրերում ընդգրկվի առնվազն հինգ տարի: Օհաննեայան ամբիոնի պրոֆեսոր նշանակվեց Երիկ Վայցը՝ պատմության բաժնից: Թուսունում Արիզոնայի հանալսարանում Գրեգորի և Ենա Մելիքյանները 2002-ին հիմնեցին հայոց լեզվի և նշակույթի դասավանդման ծրագիրը: Այժմ Բերկլիում Կալիֆորնիայի հանալսարանում Վիլյամ Սարոյանի անվան ամբիոնի համար միջոցներ են հանգանակվում: Մինչ այդ, 1995-ից սկսյալ եղել է Սարոյանի ամբիոնի այցելու պրոֆեսորական կազմ. առաջինն էր Ուչարդ Ջովիաննիսյանը, որին հետևեցին Տիգրան Կոյումջյանը և Ստեփան Աստուրյանը: Վերջինս 2003-ին նշանակվեց դասախոս և հայագիտության ծրագրի գործադիր տնօրինման մինչև ֆինանսների հանգանակման ակցիայի ավարտը: Չիկագոյի հանալսարանում գործում է նաև մեկ կիսամյակով իրավիրքած հերթափոխվող դասախոսական կազմ, որին նաև անդամակցել են Պիտեր Կաուին, Ուրբերտ Ջուլսենը, Ջրիստինա Մարանչին, Ուրբերտ Դ. Յանգը և ուրիշներ:

Վերընշյալ ամբիոններից զատ՝ հյույս պատճության և/կամ լեզվի դասավանդման ծրագրեր են իրականացվում Նորթրիջում Կալիֆորնիայի նահանգային համալսարանում (Դերմինե Սահսերեցյան, Կարապետ Մոմչյան), Սան Դիեգոյում Կալիֆորնիայի պետական համալսարանում (Արաքսի Թութեյյան), Գլենդեյլի համայնքի քոլեջում (Լևոն Մարտացյան, Օշին Զեշիշյան, Օննիկ Հայրապետյան) և Միջիգանի Վեյն նահանգային համալսարանում (Տիգրան Թումաջյան): Ոչ մշտական դասընթացներ են անցկացվում մի քանի այլ կրթօջախներում քոլեջներում և համալսարաններում։ Նյու Ջերսիի Ռութգերսի (Rutgers) համալսարանում, Նյու Յորքի համալսարանում, Վաշինգտոնի Չորջքառունի համալսարանում, Քլիվլենդի նահանգային համալսարանում (որտեղ Զոն Գրեփինը հրատարակել է հյուրենի լեզվաբա-

նության պարբերական), Կոնեկտիվուտի համալսարանում, Կալիֆորնիայի Նահանգային Լոս Անջելեսի համալսարանում և Լոս Անջելեսի, Փասադենա և Ութստ Կալիֆ քոլեջներում։ 1970-ականներին հայտարարվեց, որ Սարգիս Թարզյանը հայագիտության ամբիոն է նվիրաբերել Փենսիլվանիայի համալսարանում, և մի քանի տարի շարունակ այնտեղ հայերեն դասընթացներ էր վարում Վարդաս Գրիգորյանը։ Սակայն անհայտ պատճառներով Թարզյան ամբիոնի գործունեությունը մշտական չդարձավ և դուրս մնաց հայկական դասավանդությանց գոլաքիա։

Գիտահետազոտական խնդիրների իրականացման հետամուտ հաստատությունների թվում են Վաշինգտոն քաղաքի Դայլկական ազգային ինստիտուտը (ANI-Ռուբեն Աղասյան), Ութերքառունի, Մասաչուսեթս, Դայլկական գրադարանը և թանգարանը (ALMA-Գերի և Սուլամ Լինդ-Սինանյան), Արլինգթոնի, Մասաչուսեթս, Դայլկական մշակութային հիմնարկը (ACF-Ռոբերտ Միրաք, Արա Ղազարյանց), Դայագիտության և հետազոտությունների ազգային ընկերակցությունը (NAASR-Մանուկ Յանձ, Մարկ Մամիկոնյան), Նյու Յորքի Դայաստանյաց Եկեղեցու թեմի Զոհրաբի անվան տեղեկատվական կենտրոնը (Գրիգոր Մաքսուլյան, Արա Արքուն), Նյու Յորքի Սուլը Ներսես Ենարանը (Դանիել Ֆինդիկյան, Արքահամ Տերյան, Ռոբերտա Էրվին) և Ժամանակակից հետազոտության ու վավերագրերի Զորյան հիմնարկը, որն այժմ գտնվում է Տորոնտոյում, Կանադա (Զորյ Շիրինյան, Գուրգեն Սարգսյան): Խսկ ավելի վաղ, Տրոյում (Նյորք Ռենսելլերի պոլիտեխնիկական ինստիտուտի նշանավոր գիտնական Վազգեն Լ. Բարսեղյանը կազմակերպել և ղեկավարում էր հայկական ճարտարապետական հուշարձանների մեծաթիվ լուսակարների միկրոֆիշ արխիվային հավաքածուի պատրաստումը (ավելի քան 40.000 պատկեր): ԱԱԾ Կոնգրեսի գրադարանի հայ և վրաց գրականության մատենագիր Լևոն Ավելյանը հիմնական աղյուր դարձավ այն բոլորի համար, ովքեր տեղեկություն և նյութեր են փնտրում Դայաստանի և հարակից երկրների վերաբերյալ: Կոնեկտիվիտում Ուևլեյան համալսարանում Խաչիկ Թոլոյանը խմբագրում է Diaspora սփյուռքագիտության անսագիրը:

Հարավային Ամերիկայում հայագիտությունը հաճալսարանական մակարդակով դասավանդվում է Սառ Պաուլոյում (Բրազիլիա) և Բուենոս Այրեսում (Արգենտինա): Եսայի Օ. Քրուցյանն առաջինն էր, որ հայերենի դասընթացներ կազմակերպեց Սառ Պաուլոյի հաճալսարանում 1962-ին, որից հետո Սոսի Ամիրայյանը հայոց լեզվի և գրականության դասընթացներ անցկացրեց՝ որպես Արևելյան լեզուների բաժնի բաղկացուցիչ մաս: Ծրագիրն ունի լեզվի լաբորատորիա և օժանդակ դասախոսներ:

Արգենտինայում Վարդան Մատթեվոսյանը և Էդուարդո Կարսակյանը 1992-ից ի վեր հայոց պատմության, կրոնի և մշակույթի դասընթացներ են կազմակերպում Սալվադորի համալսարանի Արևելագիտության դպրոցում, որը մասնավոր հաստատություն է: Ծրագրի հայոց լեզու, գրականություն, կրոն, արվեստ և ճարտարապետություն դասավանդող մասնագետների թվում են Յակոբ Գուլույանը, Գուստավո Էնգուլյանը, Սերխիո Կոնյավյանը և Սոնա Սեֆերյանը: Բուենոս Այրեսի հանալսարանում Խուան-Կարլոս Թուֆեկչյանը հայ ճարտարապետության դասընթացներ ներմուծեց 1987-ին, բայց 1997-ին նրա՝ թոշակի անցնելուց հետո, այս պաշտոնը մնաց թափուր: Նաև Զոն Ֆ. Քենեդիի անվան համալսարանում գործում է հայագիտության ազատ ամբիոն (Ուոզա Մաջյան), և մեկ ուրիշ ամբիոն՝ Բուենոս Այրեսի համալսարանում (Սելիհա Բուլղուրջյան), որոնք պարբերաբար կազմակերպում են դասախոսություններ և այլ ծրագրեր հայոց պատմության, մշակույթի, ցեղասպանության և Սփյուռքի ուսումնասիրությունների վերաբերյալ՝ առանձ կանո-

նավոր կրթաժրագրերի: Բուլղուրջանը նաև Արգենտինայի Գիտական և տեխնիկական հետազոտությունների ազգային խորհրդի անդամ է:

Մտահոգություններ

ԱՄ-ում տարիների ընթացքում հայագիտության գանազան բնագավառների ավելի քան 25 թեկնածուներ ստացել են փիլիսոփայության դոկտորի աստիճան, հիմնականում Լու Անքելսում Կալիֆորնիայի, ապա՝ Կոլումբիայի համալսարաններում: Ավելի մեծ թիվ են կազմում հումանիտար գիտությունների մագիստրոսի կոչում ստացողները: Կան նաև այնպիսիք, որոնք ընտրել են այլ հիմնական բնագավառներ կամ համալսարաններ, որոնք, այնուամենայնիվ, սովորել են հայերեն կամ հայագիտությունը դարձել երկրորդական բնագավառ՝ ներառելով իրենց հետազոտություններում: Դայագիտության փիլիսոփայության դրկտորի աստիճան ստացողների զգայի մասն աշխատում է ուսուցման կամ հետազոտության այնպիսի ոլորտներում, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչություն ունեն հայագիտության բնագավառի հետ: Նրանք նպաստել են նաև արևատյան լեզուներով տպագրվող, հատկապես անգլերեն հրատարակությունների տարածմանը, որոնք կապ ունեն բոլոր հայագիտական առարկաների և շրջանների հետ:

Դայագիտությամբ զբաղվող անհատների թիվ աճը և որոշակի աստիճանի հաղորդակցման ու համակարգման անհրաժեշտությունը 1973-74թ. ինձ դրդեցին նախաձեռնել Դայագիտության ընկերակցություն (Society for Armenian Studies, SAS), որի գոյության 40-ամյակը կնշվի 2004-ին: Այն ունի ավելի քան 200 անդամ, չնայած հայագիտության բնագավառում նրանցից քերն են զբաղեցնում ակադեմիական պաշտոններ կամ իրենց մանկավարժական ու հետազոտական աշխատանքի հիմնական մասը նվիրում հայագիտական առարկաներին: Մեծամասնությունը դասավանդում է հարակից առարկաներ: Կան նաև ուսանող և անկախ հետազոտողներ:

Դայագիտության ընկերակցության տեղեկագիրը (SAS Newsletter) ներկայացնում է անդամների գործունեության և հրատարակումների վերաբերյալ վերջին տեղեկությունները, իսկ ընկերակցության տարեգիրը (Journal of the Society for Armenian Studies) տպագրում է տվյալ բնագավառին վերաբերող հոդվածներ և գրախոսություններ: Տարիների ընթացքում Դայագիտության ընկերակցությունը կազմակերպել է մի շարք թեմատիկ քննարկումներ և հիմներ՝ Սիցին Արևելքի ուսումնասիրությունների ընկերակցության (MESA) ամենամյա գիտաժողովներում, ինչպես նաև, ավելի հազարեակ, Ալավոնագիտության ամերիկյան ընկերակցության (AAASS) ու Ամերիկյան պատմագիտական ընկերակցության համաժողովներում (AHA):

Չնայած վերջին ժամանակներս հայագիտության ձեռք բերած ակնառու հնչեղությանը՝ դեռևս առկա է ուրիշ բնագավառների հետ փոխգործունեության խնդիրը: Դաճախ տպագրություն է ստեղծվում, թե մենք գրուցում ենք ինքններս մեզ հետ, քանի Սիցին Արևելքի ուսումնասիրությունը և նույնիսկ սլավոնագետների համար հայագիտությունը մնում է ուսումնասիրության երկրորդական տեղում: Անհրաժշտ է մեծ ջանքը գործադրել հայագիտությունը տարածաշրջանային ավելի բազմազան ասպարեզներում ներառելու համար, օրինակ՝ մասմակցելու պատկերագիտության (iconography) և հնագրագիտության, կրոնի և աստվածաբանության, ֆեմինիզմի, պատերազմի և ցեղասպանության, գրական թեմաների վերաբերյալ միջոցառումներին ու հրատարակություններին, որոնք դուրս են հասուլ երնիկական և կրոնական սահմաններից: Այս կապակցությամբ, իբրև օրինակ, եթե մենք Սիցին Արևելքի ուսումնասիրությունների ընկերակցության համագումարում Լեռնա-

յին Դարաբաղի հարցի շուրջ խմբային քննարկումներ կազմակերպեցինք հայ ու աղորեցանցի դիվանագետների և գիտնականների մասնակցությամբ, շատ ավելի մեծ լսարան էր հավաքվել, քան սովորաբար լինում էր գուտ Դայագիտության ընկերակցության անդամների ներկայության դեպքում: Դիմնական խմբից նշյալ առարկաների և բնագավառների շարքին հայագիտության ամբողջական սերտածումն է, ինչը և միաժամանակ նոր նվաճումների հնարավորություն կը նենալու:

Դայագիտության ասպարեզում նկատվող զգայի առաջընթացին գուգահեռ՝ գյություն ունեն նաև բավականին լուրջ խնդիրներ: Ավելի թիվ քով ուսանողներ են կամենում ժամանակ և գումար ծախսել՝ գիտական բարձր աստիճաններ ծեռք բերելու համար հատկապես աշխատանքի տեղավորման սահմանափակ հնարավորությունների պայմաններում: Դոկտորական աստիճանի համար պահանջվող բոլոր պայմանները բավարարելուց հետո, որի համար անհրաժեշտ է 5-10 տարի, աստիճան ստացողները կարող են անտեսվել Միջին Արևելքի կամ ուսւարելավորագիտության ուսումնասիրություններով գրադիդունների մորույթներից հօգուտ նրանց, ովքեր որպես մասնագիտական առարկա ընտրել են արաբական, պարսկական, թուրքական կամ ուսական հետազոտությունները: Իսկ հայագիտության նեղմանագիտական բնագավառում նրանց անհրաժեշտ է մեծ համբերություն՝ սպասելու աշխատանուն բացվելուն:

Արևմուտքում մշակված ցանկալի մոդելը հետազոտական և ուսումնական միավորն է, որը հայտնի է «Կենտրոն» անվամբ: Նման կենտրոնը կարող է միավորել տարերե բաժիններում և ֆակուլտետներում առկա հետազոտական և ուսումնական պաշտոնները՝ կազմելով հայագիտության համապարփակ ծրագիր: Կենսունակ լինելու համար կենտրոնին պետք է առնվազն 4-5 հիմնական մասնագիտական բնագավառ, որոնք բացի գիշավոր՝ հայոց լեզու, գրականություն և պատմություն առարկաներից, կներառեն նաև գեղարվեստ և արվեստի պատմություն, երաժշտություն և երնո-երաժշտագիտություն, հարակից հասարակական գիտություններ, ինչպես օրինակ՝ ընկերաբանություն և մարդաբանություն: Դայագիտության կենտրոնը հնարավորություն կը նենալու իրականացնել բակալավրի կոչում շնորհող մասնագիտական ծրագիր և մագիստրոսի կոչում շնորհող համապարփակ հայագիտական ծրագիր:

Բացի այս ամենից՝ վաղուց զգացվում է անկախ հետազոտական կենտրոնների կարիքը, որոնք որևէ համալսարանի կամ հաստատության ենթակա չեն: Այդպիսի կենտրոնները կարող են ստանձնել պատվիրված աշխատանքներ և կազմել աղբյուրներ, տվյալներ և հրապարակումներ հայ համայնքի և միգրուցե կառավարության համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ: Միաժամանակ այս կենտրոնները հայագիտության մասնագետներին կարող են ապահովել աշխատանքով, որն իր հերթին կավելացնի այս բնագավառում գիտական աստիճանի համար դիմունների թիվը: Օրինակ՝ Երևանում Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը (ACNIS), որը տարիներ շարունակ բողարկում է օգտակար հրատարակությունների արժեքավոր ժողովածուներ՝ բազմաթիվ մասնագետների մասնակցությամբ և հիմնականում Սփյուռքի ֆինանսավորմանը: Այնուամենայնիվ, գիտական բարձր մակարդակի ապահովման և հայագիտության ասպարեզներում առաջարկության կամ հաստատության առաջարկության գործուղության մեջ անձանց պարտ դեր չի ընդունվել: Նման կենտրոնների իրական արժեքը դեռ չի գիտակցվել այն անձանց, կազմակերպությունների կամ իշխանությունների կողմից, որոնք կարող են ֆինանսավորել դրանք: Փաստորեն, այսպիսի կազմակերպությունների գործուղության մասնակցությամբ և հիմնականում Սփյուռքի ֆինանսավորմանը: Վյուամենայնիվ, գիտական բարձր մակարդակի ապահովման և հայագիտության ասպարեզներում առաջարկության կամ հաստատության առաջարկության գործուղության մեջ անձանց պարտ դեր չի ընդունվել: Նման կենտրոնների իրական արժեքը դեռ չի գիտակցվել այն անձանց, կազմակերպությունների կողմից, որոնք կարող են ֆինանսավորել դրանք: Փաստորեն, այսպիսի կազմակերպությունների գործուղության մասնակցությամբ և հիմնականում Սփյուռքի ֆինանսավորմանը: Վյուամենայնիվ, գիտական բարձր մակարդակի ապահովման և հայագիտության ասպարեզներում առաջարկության կամ հաստատության առաջարկության գործուղության մեջ անձանց պարտ դեր չի ընդունվել: Նման կենտրոնների իրական արժեքը դեռ չի գիտակցվել այն անձանց, կազմակերպությունների կամ իշխանությունների կողմից, որոնք կարող են ֆինանսավորել դրանք: Փաստորեն,

Նույնիսկ նահանջ է նկատվում, քանի որ Սյուլ Յորքի Զոհրաբի անվան հետազոտական տեղեկատվական կենտրոնը կրօնատել է իր գործունեության շրջանակները, իսկ Վաշինգտոնի Դայկական ազգային ինստիտուտից (ANI) պահանջվել է իր նախնական առաքելությունը գիտական ուղղվածությունից և Դայոց ցեղասպանության փաստի վերահաստատումից վերափոխել թանգարանային գործունեության:

ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սին այժմ ես քիչ խոսեցի Հայաստանի և արտերկրի գիտնականների փոխհարթերությունների մասին: Հայագիտական համաշխարհային այսօրինակ համաժողովների անցկացումը, ինչպես նաև հանդիպումների կազմակերպումը Հայաստանում և արտերկրում մի քանի տարին մեկ, անշուշտ, նպաստավոր կի-նեն: Արդեն ժամանակն է նտածել Հայագիտության միջազգային ընկերակցության ստեղծման մասին, որը հավանորեն կունենա ընդհանուր մարմին՝ հասարակական գիտությունների, լեզվի և լեզվաբանության, դրամատուրգիայի և գրականության, կրոնի և աստվածաբանության, գեղարվեստի և արվեստի պատմության, ինչպես նաև պատմության ենթաբաժններով: Կառուցվածքի, գործունեության և ֆինանսավորման խնդիրները պետք է արձարձեն եթե ոչ այստեղ, ապա գոնե գիտության հիմնական ճյուղերի և աշխարհագրական շրջանների ներկայացուցիչների հետ հատուկ հանդիպման ժամանակ: Կարելի է նաև ստեղծել հայագիտական միջազգային ամսագիր, նմանօրինակ ներկայացուցչական խմբագրական խորհրդով և համապատասխան աշխատակազմով ամսագրի պատրաստման, հրատարակման, առարձան, ինչպես նաև տվյալների գրանցման ու հաշվվածքի պահպանման համար:

Վերջին տարիների տեխնոլոգիական հեղափոխությունը անթիվ նորարարությունների հեռանկարներ է բացել: Մենք հնարավորություն ունենք հաղորդակցվել գործեր ակնքարորդեն: Մատչելի պարզ սարքավորումների և տեխնոլոգիայի միջոցով մենք կարող ենք փոխանակել մեր գիտելիքները և ռեսուրսները ողջ աշխարհի բազմաթիվ անհատների հետ: Դրավերի դեպքում մենք կարող ենք ազատ մուտք ունենալ միմյանց տներն ու գրասենյակները: Մենուսի գործող գիտնականները և ուսանողները համաշխարհային ցանցի օգնությամբ այժմ կարող են ընդիհանուրի մաս կազմել: Դեռախոսի մալուխի և առավել մատչելի դարձող սարքավորումների միջոցով մենք նույնիսկ կարող ենք դասավանդել ամբողջական դասընթացներ և ելույթ ունենալ օվկիանոսներից այն կողմ գտնվող բազմաթիվ ունկնդիրների առջև: Մի քանի տարի առաջ, մամուլում մեծ արձագանք ստացավ իմ Կալիֆորնիայի համալսարանում անցկացրած առաջին հեռակա դասընթացը, երբ բացի Լոս Անջելեսում Կալիֆորնիայի համալսարանի լսարանում ներկա իմ ուսանողներից, ինտեր-ակտիվ համակարգի միջոցով ուղղի երերում խոսք ուղղում է նաև համալսարա-նի Բերկի և Սանտա Բարբարայի մասնաճյուղերի լսարաններում հավաքվածներին: Նոր և առավել կատարելագործված հաղորդամիջոցների զարգացնամք՝ այդ նորարարությունն արդեն սովորական է դարձել, եթե ո՞չ հնագած:

ՏԵԽՆՈՂԳԻԱՆ Այժմ կարող է պատասխանել երևակայության գրեթե բոլոր թռիչքներին: Արժանի տեղ է գրավում ինտերնետում հրապարակվելը: Ինչ վերաբերում է հայոց լեզվին, ապա անհրաժեշտ է լուրջ ուշադրություն հրավիրել տառաչափի, գրադարձության, ծևաչափի և այլ խնդիրներին, որպեսզի լրատվության փոխանակման համընդիանութ ծրագիրն ի կատար ածվի: Մերենաները պետք է ծրագրավորվեն հայերեն տառերը կարդալու, իսկ համակարգչային ծրագրերը պետք է ստեղծվեն հայերեն խոսելու և հայերեն ու հայերենից թարգմանելու կարողությամբ: **Տեղեկատվությունը կարող է հետորեն թվայնազգելի, իսկ տվյալների հնտե-**

րակտիվ բազայի ստեղծումը կարող է վերածվել գիտնականների համատև գործունեության անկախ աշխարհագրական վայրից: Այս ասպարեզում արդեն իրականացվել են կարևոր աշխատանքներ՝ օրինակ, Յու Վայտենբուրգն իր դասական հայերեն տեքստերի ինտերնետային էջերում, ինչպես նաև Երևանում՝ Դայաստամի ամերիկյան համալսարանում մեքենայացված մեթոդի կիրառմանը հայերեն նանրանկարչության ձեռագրերում: Իսկ Մերուժան Կարապետյանի դեկավարած խումբը ստեղծել է հայ դասական մատենագրության թեմայական գրադարան (www.digilib.am). արդեն ինտերնետում են V-VIII դարերի հայ գրականության 500 լավագույն գործերը: Այս նվաճնան գիտական կիրառությունները բազմաթիվ են, իսկ համագործակցության և մասնակցության հնարավորությունները՝ կարծես անսպառ: Այնուամենայնիվ, նույնիսկ այս հեռանկարով հանդերձ, մենք են ենք մնում բազում ասպարեզներում: Ժամանակակից արևելահայերենի և արևմտահայերենի ուսուցմանն ու ուսուցանմանը օժանդակելուն չեն բավարարում արդյունավետ տեսապողական միջոցներն ու անհրաժեշտ լաբորատոր նյութերը: Պատկերացրեք հայկական գեղարվեստում, արվեստի պատմության, ճարտարապետության և հարակից այլ բնագավառներում ուսանողների և գիտնականների վրա ինչ կողը ազդեցություն կարող է ունենալ «վիրտուալ իրականությունը»:

Ի վերջո, հայագիտության բնագավառի գիտնականների համար, անկախ այլ բանից՝ նրանց կրթությունը հայկական է, թե ոչ և արդյոք նրանք հետաքրքրվում են Հայաստանի ներկայիս քաղաքական խնդիրներով, թե ոչ, շատ կարևոր է հայկական պատմամշակութային փորձը համաշխարհային պատմության ու մարդկային հա- վաքական հիշողության մաս դարձնելը։ Բազմաթիվ դասագրքերում և այլ կարևոր հրատարակություններում Հայաստանի մասին տեղեկությունների բացակայությունն արտացոլում է հայ ժողովրդի ապրօք պատմական դժվարությունները։ Այ- նուամենայնիվ, հայագիտությամբ գրադարձ բոլոր գիտնականները անառարկելի- որեն միակարծիք են, որ առկա են հայ մշակույթի կամ քաղաքակրթության այնպի- սի նշանակալի դրսերումներ, որոնք Մովսես Խորենացու խոսքերով, արժանի են հիշատակնան։ Չափազանցություն չի լինի հայտարարելը, թե Հայաստանն ու հայերը կարևոր դեր են ունեցել հնագույն և միջնադարյան մշակույթում, նախա- քրիստոնեական և քրիստոնեական կրոնում, արքեստի և ճարտարապետության մեջ, միջազգային առևտունության մեջ և այլն։ Այս առաջարկությունը պայմանավորված է Հայաստանի անկախության պահպանության համար։

Մենք պետք է Հայաստանի և հայերի մասին տեղեկությունների պակասության վերաբերյալ սոսկ բողոքներին «արծագանքող» փուլից անցնենք «գործառնամետ» նակարդակի՝ ինչպես գիտնականների, այնպես էլ համայն հասարակության մտապատկերում հնագույնից մինչև նորագույն ժամանակներ հայկական փորձը գիտակցելու և գնահատանքի արժանացնելու նպատակով։ Սարտահրավերն էլ հենց նշյալը համաշխարհային համատեքստ բերելն է, ինչը հաջողվել է անել Միջագետքի, պարսկական, հունակելլենական, արաբական և այլ երկրների դեպքերում։ Եթե այս ջանքը հաջողությամբ պսակվի, մեծապես կշահեն թե հայ ժողովորի սերունդները և թե մարդկությունն ընդհանրապես։ Այս մարտահրավերին դիմակայելու հեռանկարներն ընդլայնվեցին Հայաստանի վերանկախացմամբ և աշխարհաքաղաքական շոշափելի իրականության Հայաստանի Հանրապետության ի հայտ գալով։ Գլոբալ և տարածաշրջանային անվտանգության մտահոգությանը զուգընթաց՝ հայերի բազմազան մասնակցությունը Օլիմպիական խաղերից մինչև միջազգային համաժողովնե-

րին և գիտաժողովներին, երաժշտական, պարային և արվեստի փառատոններին, նպաստում են այս գործընթացին: Իր հերթին՝ տեղեկացվածության աճը հայագետ գիտնականներին օգնում է թափանցել ավելի լայն շրջանակներ և օգտվել հայկական փորձը նարդկային հիշողության բաղկացուցիչ մաս դարձնելու հնարիավերությունից:

Որպես գիտնականների համայնք՝ մենք չպետք է բավարարվենք ներկայիս հրավիճակով կամ անձնական և հավաքական դաշնիներով: Մենք պետք է փնտրենք դասավանդման և հետազոտման նոր և արդյունավետ ուղղություններ՝ մի կողմ դնելով վճասակար կարծրապատկերները: Հավատացած եմ, որ տեղեկատվության և գաղափարների փոխանակումը ցույց կտա, որ հիմնական հարցերի շուրջ արդեն գոյություն ունի բարձր աստիճանի համաձայնություն, իսկ անարգել հետազոտությունը և ազատ ներկայացնելը պետք է լինի հայագիտության հիմնական հենարանը՝ հանայն աշխարհում: